ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 N 73 ,,21 ,, Նոյեմբերի 2017թ.

<<ԵՂԵԳՆԱՁՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԴԻԱՀԵՐՁԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<ՀՀ քաղաքացիական օրենսգրքի>> 653-659-րդ հոդվածների, << Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 67 հոդվածի 1-ին կետի ժթ) ենթակետի, 70-րդ հոդվածի 1-ին կետի ա) ենթաակետի, 76-րդ հոդվածի 1-ին կետի, ՀՀ Նախագահի 1997թ. մայիսի 7-ի թիվ 728-Ն հրամանագրի 1.6 րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզի դատախազի 2017թ. հոկտեմբերի 2-ի N 66 Ե587-17 գրությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Թույլատրել ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքի <<Եղեգնաձոր ԲԿ>> փակ բաժնետիրական ընկերությանը(տնօրեն՝ Ա.Կարապետյան)սգո ծառայություններ իրականացնելու նպատակով <<Մարիանժ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ տասը(10) տարի ժամկետով, ամսական՝ տասնչորս հազար ութսունութ (14088) ՀՀ դրամ վարձավճարով կնքելու գույքի վարձակալության պայմանագիր: Վարձակալ << Մարիանժ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանձնել <<Եղեգնաձոր ԲԿ>> ՓԲԸ հաշվեկշռում գտնվող դիահերձարանի տարածքից մեկ հարյուր քսան(120) քառակուսի մետր շենքի տարածք:

2. Վարձակալության պայմանագրի նոտարական վավերացման և կադաստրային գրանցման ծախսերը իրականացնել <<Մարիանժ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հաշվին:

3 Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ